70. ՔՈՍԱԿԵՆ ՀՈՒ ՔԱՋԱԼԵՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլալ ա չիլալ մին քոսակ, մին էլ մին քաչալ։ Սահանք ամեքյը մին պարկ ցորեն ըն եր կալալ, թա տանին ճղացումն աղին։ Տարալ ըն աղալ։

Քոսակ ախպերն ասալ ա. «Քա՛չալ ախպեր, եկ պեղարճ թըխինքյ»։

— Եկ թխինքյ,—ասալ ա քաչալը։

Տաշտը ճրավ լցալ ըն, ալերը պարան տվալ մեչը, հունցալ հու պեղարճ թխալ։ Մինը մեծ ա տուս եկալ, մինը՝ պուճուր։

Էս քոսակ ախպերն ասալ ա. «Դե վըեր ըտրհենց ա, ամեքյը մին սոտ ասինքյ, հուրը վեր մեծ ինի, լոխ ընդրանն ա»։ Քաչալն ասալ ա. «Լավ ա»։

Քաչալն ասալ ա. «Մեզ մին ղղղան օնինքյ, ըստրա մեչին մին տոն շինեցինքյ, տանը կլխեն մին բախչա»։

— Մեզ մին լու օնինքյ,—ասալ ա քոսակը,—էղ լուն քցեցինքյ տոնը, տանը մեչին ծու ածից, տոնը վեր լցավ, եր իլավ հուրթին էլ ծու ածից հու ինքյը կորավ, քիթի ոչ։ Ասեղը հորումը վեր տվի, եր իլի տըեսնամ Ըստամրուլ կալ ա կասում։ Քյինաացի ընտեղ, լուն քիթի պերի, տըեսնամ մեչքը յարա յա։ Ճղուպուրը տիրի մեչքին թխեցե, ճղուպուրի ծառ փսավ մեչքին։ Ճղուպուրի ծառը եր իլի, տըեսնամ ընդրա մեչին մին բախչա. բախչան ման եկե, մին ծմերուկ քիթի։ Ծմերուկը օղեցի կտրիմ, կաբեցի ոչ-ծեռքս կոխեցի՝ նի չը մտավ, կլոխս կոխեցի՝ տըեսնամ հազար ծիյավեր ման ըն կյալիս։ Ասեցի. «Խե ը՞ք ման կյալիս»։ Ըսեցին. «Էրկու հարուր մարթ ա կորալ, ման ընք կյալիս»։

— Քոսակ ախպեր,—ասալ ա քաչալը,—քու սոտը ավելի մեծ ա։

Քոսակը պեղարճնեն եր ա կալալ, ետնան էրկուսը ճղացիցը հղե ըն իլալ։ Հղըցեն քաչալն ասալ ա. «Քոսակ ախպեր, մին պեղարճ տոռ»։

Քոսակն ասալ ա. «Խե ը՞մ տամ, մին աբասի տո, տամ»։

Քաչալն ասալ ա. «Լավ ա, տանը կտամ»։ Քոսակը մին պեղարճը տվալ ա։ Եկալ ըն տոն։ Քոսակը ուրանն աբասին օղալ ա, քաչալը տվալ չի, սոտ մեռալ ա։

Պերալ ըն, թա պտանին, քոսակն ասալ ա. «Ես լավ կպտանիմ»։

Ենանն տիրալ ա կտավեն մեչին, մխաթավը մսեն նհետ կարալ։ Ենանն տարալ ա, թա թաղե, տըեսալ ա կյողեր ըն կյալիս։ Քոսակը նի ա մտալ քարեն տակը, մըեռալին թողալ ընդեղ։ Կյողերը եկալ ըն նստոտալ, վեր կյողացած փողերը փայ անին։ Փայ ըն ըրալ, պրծալ, մինակ ընդեղ մնացալ ա մին թոր։ Էս կյողերը ասալ ըն. «Էս թրավը էս մեռալին թխինքյ. վերը մեչան ճոթ անի, հարուր վըեսկի ա կյինը»։

Էս քաչալը էս վեր ըսկացալ ա, ասալ ա. «Մեռալներ, ե՛ր կացեքյ»։ Քոսակն էլ ծեն ա տվալ. «Փռնե, կյամ ընք»։

Կյողերը էս վեր ըսկացալ ըն, փողերը ըտեղ ըն թողալ, փախալ։ Էս քոսակը հու քաչալը եր ըն կացալ, փողերը փայ ըրալ, ենանն քյինացալ ըն ուրանց տոն։

Ըստուծանա իրեք խնձոր վեր ընգնե. մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ՝ չլսողեն։